

## **ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձը Բանակի օրվա առթիվ**

Արմավիրի մարզի հարգարժան բնակիչներ, սիրելի՛ հայրենակիցներ, Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Բանակի օրվա կապակցությամբ: Այսօր մենք տոնում ենք մեր ազգային հպարտության, խիզախության և մեր հարատևության հիմնաքարը հանդիսացող Հայոց հաղթանակած բանակի կազմավորման 27-րդ տարեդարձը:

Մեր ազգային հպարտությունն իր կազմավորման այս ճանապարհին բազում մարտահրավերների է դիմակայել՝ ամեն անգամ ապացուցելով, որ անպարտելի է, պատրաստ պաշտպանելու իր երկրի ու ժողովրդի անդորրը: Փառք ու պատիվ մեր երիտասարդ, բայց հարուստ պատմություն ամբարած բանակին, որը ամուր թիկունք է դարձել բոլորիս համար՝ հնարավորություն ընձեռելով ապրելու և արարելու խաղաղության պայմաններում:

Սիրելի՛ բարեկամներ, մենք էլ մեր հերթին պետք է զորավիգ լինենք մեր բանակին՝ նպաստելով նրա հզորացմանը և ամրապնդելով բազում կյանքերի գնով ձեռք բերված խաղաղությունը: Հավատացած եղեք, մենք հոգու պարտք ունենք տալու այն նահատակների հիշատակին, ովքեր սեփական արյամբ փրկեցին հայրենի տունը, հողը, մորն ու մանկանը, ովքեր հանուն Հայաստանի ապագայի մնացին ռազմի դաշտում:

Ուստի փառք ու պատիվ մեր անմահ հերոսներին, մեր հաղթանակած բանակին, պաշտպանական գերատեսչության, զինված ուժերի բոլոր ծառայողներին, ովքեր գիշեր ու զօր պաշտպանում են Հայաստան երկրի սահմանները՝ միշտ պատրաստ դիմակայելու թշնամու բոլոր ոտնձգություններին:

Կեցցե՛ Հայոց ազգային բանակը՝ խաղաղության ամրապնդման և մեր ժողովրդի հպարտության 27-ամյա հսկան:

ՀՀ Արմավիրի մարզպետ՝

Համբարձում Մաթևոսյան